Հավելված 6
ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.
թիվ 667-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 15/32-2 որոշմամբ և հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-15/3-15/32»

Պատվիրատուն՝ **ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ**-ն, որը գտնվում է ք. Երևան, Վարդանանց փակ. 8 հասցեում, ստորև ներկայացնում է ***«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-15/3-15/32»*** ծածկագրով հայտարարված **ՇՀ** ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում 1: *Հրավերի Մաս 1-ի 2-րդ կետի «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատումը կատարվելու է Հաշվարկային առաջարկի, թե յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանված պայմանագրի առավելագույն գնի հաշվարկով:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: *28.09.2015թ.:*

Պարզաբանում: *Մասնակիցների կողմից ներկայացվող հաշվարկային առաջարկը (Ա) համաձայն Հրավերի հավելված 6-ի «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի /հավելված 1/» Պայմանագրի արժեքը չէ: Ընդ որում Պայմանագիրը կնքվելու է 1 չափաբաժնի համար առավելագույնը 2.0 մլն դրամ արժեքով, իսկ 2 չափաբաժնի համար՝ առավելագույնը 18.0 մլն դրամ արժեքով: Հետևաբար «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատումն իրականացվելու է կնքվելիք պայմանագրերի առավելագույն գների (2.0 մլն և 18.0 մլն դրամ՝ ըստ առանձին չափաբաժինների) հաշվարկով:*

Պարզաբանման հիմնավորում: *Գնահատող հանձնաժողովի 28.09,2015թ. թիվ 15/32-2 որոշում:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Հայկ Հովհաննիսյանին**:

Հեռախոս՝ +374 55 55 78 35 բջջ.

+374 10 54 06 85 քաղ.:

Էլ. փոստ՝ hho@armwater.am

Պատվիրատու՝ ***ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ***